CDTFA
CALIFORNIA DEPARTMENT OF TAX AND FEE ADMINISTRATION

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ինչո՞ւ եք դիմել ինձ

Մենք մտադիր ենք այցելել մեր նահանգի բիզնեսների մեծ մասը, որպեսզի սահմանված կարգով իրականացնենք թույլտվությունների և լիցենզիաների ստուգումները մեր Համապատասխանության և աջակցության համանահանգային ծրագրի (SCOP) շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝

- Ապահովել, որ դուք ունենաք ձեզ անհրաժեշտ նահանգային հարկերի և վճարների թույլտվություններ և լիցենզիաներ,
- Ապահովել, որ CDTFA-ի տրամադրած բազմաթիվ ռեսուրսները հասանելի են ձեզ,
- Ապահովել, որ ձեր բիզնեսի վերաբերյալ մեր փաստաթղթերը լինեն թարմացված և ճիշտ,
- Ձեզ հնարավորություն տալ հանդիպելու ներկայացուցչի հետ, որը կարող է տեղեկություններ տրամադրել և պատասխանել ձեր հարցերին,
- Ապահովել, որ դուք հասկանաք հաշվետվություններ ներկայացնելու պահանջները, որպեսզի կարողանաք հաշվետվությունները ներկայացնել պատշաճ կերպով:

Այս ծրագիրը մաս է կազմում համանահանգային ջանքերի, որոնք ուղղված են բիզնեսի սեփականատերերի կրթմանը, հարկային պահանջների կատարման բարելավմանը և մեր համապատասխանության համակարգի արդարացիության ապահովմանը: Թույլտվությունների և լիցենզիաների ստուգումը նախատեսված չէ փոխարինելու աուդիտներին կամ հարկային պահանջների կատարման կամ հարկադրման այլ գործունեությանը:

Ի՞նչ թույլտվություններ և արտոնագրեր են հարկավոր ինձ

Եթե վաճառում կամ վարձակալում եք ապրանքներ, ապա պետք է ունենաք Կալիֆոռնիայի վաճառողի թույլտվություն: Նահանգային օրենսդրությունը պահանջում է, որ վաճառողի թույլտվությունը աչքի ընկնող տեղում ցուցադրվի ձեր գործունեության վայրում (Եկամուտների և հարկային օրենսգիրք, բաժին 6067):

Հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինի նաև թույլտվություն կամ լիցենզիա հարկային և տուրքային այլ ծրագրերի համար, որոնք իրականացնում ենք մենք: Օրինակ ՝ Կալիֆորնիայի օրենսդրությունը պահանջում է, որ սիգարետներ և ծխախոտ վաճառող բիզնեսներն ունենան առանձին լիցենզիա այդ ապրանքատեսակների վաճառքի համար: Երբ այցելենք ձեր բիզնեսը, ձեզ տեղեկություններ կտանք այն մասին, թե ինչպես պետք է գրանցվել՝ ձեզ անհրաժեշտ թույլտվություններ և լիցենզիաներ ձեռք բերելու համար:

Պահանջվո՞ւմ է գրանցվել՝ օգտագործման հարկի մասին հաղորդելու համար

Կալիֆորնիայի օրենսդրությունը «որակավորված գնորդ»-ից պահանջում է գրանցվել Կալիֆորնիայի Հարկերի և տուրքերի վարչությունում (CDTFA) և ամեն տարի հաղորդել և վճարել օգտագործման հարկը ուղղակիորեն CDTFA-ին: Օգտագործման հարկի հաղորդումը և վճարումը կատարվում են մեր առցանց համակարգի միջոցով: «Որակավորված գնորդ» նշանակում է որևէ բիզնես, որից այլապես չի պահանջվում գրանցվել CDTFA-ում՝ վաճառքի և օգտագործման հարկերի համար, և որն ունի առնվազն 100 000 ԱՄՆ դոլար տարեկան համախառն մուտքեր բիզնեսի գործառնություններից: Համախառն մուտքերը կազմում են բոլոր մուտքերի հանրագումարը ինչպես ներնահանգային, այնպես էլ արտանահանգային բիզնեսի գործառնություններից: Լրացուցիչ տեղեկությունների համար տես 126-րդ հրատարակություն, *Օգտագործման հարկի պարտադիր գրանցում սպասարկող ձեռնարկությունների համար*, որը հասանելի է մեր կայքում՝ *www.cdtfa.ca.gov*:

Ի՞նչ է տեղի ունենալու թույլտվությունների և լիցենզիաների ստուգայցի ընթացքում

CDTFA SCOP ծրագրի ներկայացուցիչները կայցելեն ձեր բիզնեսին, կներկայանան և ցույց կտան CDTFA-ի կողմից թողարկված անձը հաստատող փաստաթուղթ: Այնուհետև ներկայացուցիչներն արագորեն կպարզեն, թե դուք վաճառո՞ւմ եք կամ վարձակալո՞ւմ եք այնպիսի ապրանքներ, որոնց համար պահանջվում է վաճառողի թույլտվություն:

Եթե պահանջվում է, որ դուք ունենաք վաճառողի թույլտվություն, և դա ցուցադրված չէ, SCOP ծրագրի ներկայացուցիչները կխնդրեն դա ցույց տալ: Նրանք նաև կխնդրեն ցույց տալ CDTFA-ի կողմից թողարկված այլ թույլտվություններ և լիցենզիաներ, որոնք դուք ունեք, ինչպես նաև ձեր տեղական բիզնեսի լիցենզիան:

SCOP ծրագրի ներկայացուցիչները կհավաստիանան, որ ձեր բիզնեսի վերաբերյալ CDTFA-ի ունեցած գրանցումները (փաստաթղթերը) ճիշտ են: Նրանք կարող են նաև ձեզնից խնդրել լրացուցիչ տեղեկություններ ձեր բիզնեսի գործառնությունների վերաբերյալ՝ համոզվելու, որ դուք հասկանում եք հաշվետվություններ (հաղորդումներ) ներկայացնելու պահանջները և պատշաճ կերպով հաղորդում եք: Նրանք ձեզ կհարցնեն, թե ունե՞ք արդյոք հարցեր:

Եթե անհրաժեշտ է, որ դուք գրանցվեք վաճառողի թույլտվության կամ լիցենզիայի համար, SCOP ծրագրի ներկայացուցիչները ձեզ կտրամադրեն տեղեկություններ այն մասին, թե ինչպես կարելի է դիմել՝ օգտվելով առցանց գրանցումից, որը հասանելի է *www.cdtfa.ca.gov* կայքում: Գրանցվել կարելի է նաև մեր գրասենյակներում՝ *www.cdtfa.ca.gov/office-locations.htm*: Ձեզ կխնդրեն գրանցվել մեկ շաբաթվա ընթացքում: Մեր գրանցման համակարգը ձեզ հարցեր կտա ձեր բիզնեսի վերաբերյալ: Ձեր պատասխանը կօգտագործվի՝ որոշելու հարկային և տուրքային ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) համար դուք պետք է գրանցվեք: Աջակցության համար դիմեք մեր Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-400-7115 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Փաստաթղթեր վարելը

Չափազանց կարևոր է, որ դուք վարեք ճիշտ և ամբողջական փաստաթղթեր: Կալիֆորնիայի օրենսդրությունը պահանջում է, որ դուք պահպանեք վաճառքի և գնման փաստաթղթերը, անդորրագրերը, վերավաճառքի վկայականները և սովորական հաշվեգրքերը: Փաստաթղթերը պետք է պահվեն առնվազն չորս տարի: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Regulation 1698, *Փաստաթղթեր*:

►

Որո՞նք են իմ իրավունքները

Դուք՝ որպես Կալիֆորնիայի նահանգի հարկատու, ունեք որոշակի օրինական իրավունքներ: CDTFA-ի աշխատակիցները պետք է հարգեն և պաշտպանեն ձեր իրավունքները ամեն անգամ ձեզ հետ շփվելիս: Ձեր իրավունքները՝ որպես Կալիֆորնիայի նահանգի հարկատուի, ներառում են.

- Քաղաքավարի և արագ սպասարկում,
- Արդար վերաբերմունք,
- Գաղտնիություն, և
- Տեղեկություններ և աջակցություն:

Կարո՞ղ եմ բողոք ներկայացնել, եթե ունեմ մտահոգություններ՝ կապված ստուգայցի կամ ներկայացուցիչների պահվածքի հետ

Այո: Եթե կարծում եք, որ SCOP-ի ներկայացուցիչը իրեն պահել է ոչ արհեստավարժ կերպով կամ խախտել է ձեր իրավունքները, կարող եք բողոք ներկայացնել՝ զանգահարելով կամ գրելով ձեր տեղական SCOP ծրագրի թիմի գրասենյակին:

CDTFA SCOP ծրագրի թիմի գրասենյակների ցուցակը կարող եք գտնել մեր կայքում՝ *www.cdtfa.ca.gov/taxes-and-fees/SCOP.htm#Contact*, կապվելով CDTFA-ի ձեր տեղական գրասենյակի հետ կամ զանգահարելով մեր Հաճախորդների սպասարկման կենտրոն:

Անպայման բացատրեք, թե ինչպես է SCOP ծրագրի ներկայացուցիչն իրեն պահել ոչ արհեստավարժ կերպով՝ թույլտվությունների և լիցենզիաների ստուգումն իրականացնելիս: Ձեր բողոքին ընթացք կտա ղեկավարը, որը կկապվի ձեզ հետ՝ ձեր մտահոգություններին անդրադառնալու համար:

Եթե չեք կարող ձեր խնդիրը լուծել ղեկավարի կամ մենեջերի հետ, կամ նախընտրում եք, որ ձեր բողոքին ընթացք տրվի Տեղական գործառնությունների բաժնի սահմաններից դուրս, կարող եք դիմել Հարկատուների իրավունքների փաստաբանի գրասենյակ:

Հարկատուների իրավունքների փաստաբանի գրասենյակ

Եթե ցանկանում եք ավելին իմանալ ձեր իրավունքների մասին՝ որպես հարկատուի, կամ եթե չեք կարողացել խնդիրը լուծել սովորական ուղիներով (օրինակ, ղեկավարի հետ խոսելով), նայեք 70-րդ հրատարակություն, *Ձեր իրավունքները՝ որպես Կալիֆորնիայի նահանգի հարկատուի,* կամ օգնության համար դիմեք *Հարկատուների իրավունքների փաստաբանի գրասենյակ* 1-916-324-2798 հեռախոսահամարով (անվճար հեռախոսահամար՝ 1-888-324-2798) կամ ուղարկեք ֆաքս՝ 1-916-323-3319 համարին: Ըստ ձեր ցանկության, կարող եք գրել հետևյալ հասցեին.

Taxpayers' Rights Advocate, MIC:70
California Department of
Tax and Fee Administration
PO Box 942879
Sacramento, CA 94279-0070

Լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե ունեք հարցեր լիցենզիայի հաստատման այցի վերաբերյալ, կարող եք կապվել CDTFA SCOP ծրագրի թիմի ձեր տեղական գրասենյակի հետ:

Հարկային և տուրքային կոնկրետ ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ հարկային հրատարակություններ պատվիրելու համար այցելեք մեր կայք՝ *www.cdtfa.ca.gov*, կամ զանգահարեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-400-7115 հեռախոսահամարով (TTY՝ 711):

Հարկերից խուսափելը վնասում է բոլորիս. . .

Հարկերից խուսափելու կասկածի մասին հաղորդելու համար զանգահարեք հարկերից խուսափելու մեր թեժ գիծ՝ 1-888-334-3300 հեռախոսահամարով:

164-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ■ LDA
ՀՈՒԼԻՍ, 2019 Թ.